

6550



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«10» 06 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 076 - 24

Նախաձեռնող՝

«ԱԶԱՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

ք. Երևան, Մաշտոցի 37, բնակարան 53

Գործունեությունը՝

«Արեգնազան» կրթահամալիրի նոր մասնաշենքի  
կառուցում

Կոտայքի մարզ, Նարիի համայնք, Քասախ բնակավայր

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 076 - 24

«10» հունիսի 2024թ.

«ԱՐԵԳՆԱԶԱՆ» կրթահամալիրի նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝ «ԱԶԱՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
Գործունեությունը՝ «Բ» կատեգորիա  
Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ, Նաիրի համայնքի Քասախ բնակավայր

**Ներածական մաս.** «ԱԶԱՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ն նախատեսում է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Քասախ բնակավայրի Վ. Տերյան 5-րդ փողոց հասցեում կառուցել «ԱՐԵԳՆԱԶԱՆ» կրթահամալիրի նոր մասնաշենք:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 12042022-07-0140, /ծածկագիրը՝ 07-065-0265-0061/, Նաիրի համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունը՝ N ՕՇՔՔՕՕ-0000-8332, տրված՝ 05.09.2023թ.:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասը հարթ է, ինժեներաերկրաբանական տեսակետից՝ բարենպաստ կառուցապատման համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստ, սողանք, քարաթափություն, փլուզում և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ընդհանուր մակերեսը կազմում է 0.67 հա:

**Նկարագրական մաս.** Նախատեսվում է կառուցել «ԱՐԵԳՆԱԶԱՆ» կրթահամալիրի նոր մասնաշենքը՝ 288 աշակերտի համար: Նախագծվող կրթահամալիրը բաղկացած է լինելու 2 վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերից, այն իր մեջ ներառելու է ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ պայմաններ՝ տրանսֆորմացվելու հնարավորությամբ: Հարկերը միմյանց հետ հաղորդակցվելու են մեկ ծխահարվող, 3 չծխահարվող աստիճանավանդակով և մեկ վերելակով: Շենքի ծավալատարածական լուծումները հնարավորություն են տալիս դասարանների բոլոր պատուհանները երկու աշխարհագրական կողմ ուղղվածություն ունենալուն, որը լրացուցիչ բնական լուսավորման և ինսոլյացիայի ժամեր կապահովի կրթահամալիրում: Բոլոր դասասենյակները կահավորված կլինեն վիտրաժային դռներով, որոնք կապահովեն ելք դեպի դուրս՝ բակային հատված: Կրթահամալիրի հատակագծային լուծումներում ներառված են ընդհանուր և



մասնագիտացված դասասենյակներ, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճներ, բացօթյա մարզահրապարակ և այլն: Հիմնական բոլոր դասասենյակներից նախատեսված են առանձին մուտքեր և էվակուացիոն ելքեր:

Կրթահամալիրը նախագծվում է կառուցել միաձույլ երկաթ-բետոնե հիմնկամախքով, ներառյալ՝ շենքի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Նախատեսվող դպրոցի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողի ընդհանուր մակերես՝ 6702.38 մ<sup>2</sup>:
- շենքի կառուցապատման մակերես՝ 4037.42 մ<sup>2</sup>:
- կանաչապատման մակերես՝ 2664.96 մ<sup>2</sup>:
- անջրանցիկ մակերես՝ 903.42 մ<sup>2</sup>:
- դասասենյակներ՝ 12 հատ՝ 710 մ<sup>2</sup>:
- մասնագիտացված դասասենյակներ՝ 16 հատ՝ 636 մ<sup>2</sup>:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կառուցվելու են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, վերելակ, ինչպես նաև հաշմադամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներ:

Կրթահամալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն: Կրթահամալիրի շահագործման ընթացքում առաջացող կենցաղային կեղտաջրերի մաքրման համար նախատեսվում է տեղադրել 25 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ FBR 20 տեսակի կենցաղային կեղտաջրերի մաքրման աերացիոն կայան, որը նախատեսված է 800 մարդ սպասարկելու համար:

Կրթահամալիրի նախագծում հաշվի են առնված ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումներն՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի: Կրթահամալիրը հագեցած է լինելու էներգաարդյունավետության և էներգախնայման համակարգերով:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Շինարարության ընթացքում իրականացվելու է հիմքերի փորման աշխատանքներ: Երկաթ-բետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 30962 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող գրունտից 619.3 մ<sup>3</sup> կօգտագործվի որպես հետլիցք, իսկ 30342.7 մ<sup>3</sup> հողային զանգվածը կտեղափոխվի Նաիրի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր՝ համապատասխան թույլտվություն ստանալուց հետո: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային չտեսակավորված աղբն է՝ 0.9 մ<sup>3</sup> և շենքի քանդումից առաջացած շինարարական աղբը՝ 120 մ<sup>3</sup>: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է Նաիրի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում, բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգ իրականացման գործողություններ:



ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

**Պարճառաքանական մաս.** Կրթահամալիրի շահագործման ընթացքում կենցաղային կեղտաջրերի մաքրման արդյունքում առաջացած կեղտաջրերը (98%) օգտագործվելու են կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով: Մաքրման կայանին կից տեղադրվելու 50 մ<sup>3</sup> տարողությամբ ռեզերվուար, որտեղից մաքրված ջուրն ուղղվելու է ոռոգման, իսկ ոչ ոռոգման շրջանում պահեստավորված ջուրը, պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մասնագիտացված ընկերության կողմից:


Կրթահամալիրի գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել աղբի տեսակավորում՝ թուղթ, պլաստիկ, սննդային և այգեգործական մնացորդներ: Առաջացած կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի աղբավայր՝ համապատասխան լիցենզավորված ընկերության կողմից, իսկ տեսակավորված մյուս թափոնները կտրամադրվեն երկրորդային վերամշակման՝ «Թափոն էյեմ» կազմակերպությանը՝ պայմանագրային հիմունքներով: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման նպատակով տնկվելու են թխկի սրտատերև կարմիր՝ 28 հատ, գնդաձև իլենի՝ 12 հատ, գնդաձև թույա՝ 9 հատ, սակուռա՝ 5 հատ, բարբարիս՝ 6 հատ, ասպիրակ՝ 10 հատ, ֆորգիցիա՝ 8 հատ, խենոմելիս՝ 15 հատ, սամշիտ՝ 56 գծամետր, եղևնի կովկասյան՝ 10 հատ, թզուկ վարդեր՝ 86 մ<sup>2</sup> և կկատարվի սիզամարգի ցանքս՝ 1280 մ<sup>2</sup>:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Կրթահամալիրի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO<sub>x</sub>) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

**Եզրափակիչ մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Նաիրի համայնքում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Քասախ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում բարձրացված հարցերի պարզաբանումները թափոնների, մաքրման կայանի, կանաչապատման



լուծումների վերաբերյալ, ներառվել են լրամշակված հայտի մեջ: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

### **Պարտադիր կատարման ենթակա պահանջներ**

1. Կրթահամալիրի շինարարության և շահագործման ընթացքում պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մայիսի թիվ 12-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:
3. Պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 12 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:
5. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Նաիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված նախագծին համապատասխան:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Նաիրի համայնքի հետ համաձայնեցված:
7. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«ԱԶԱՏ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Քասախ բնակավայրի Վահան Տեղյան



5-րդ փողոց հասցեում «ԱՐԵԳՆԱԶԱՆ» կրթահամալիրի նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի տեղակալ

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
առաջին կարգի մասնագետ

Սուսաննա Անտոնյան